

БИБЛИОТЕКА  
ИСТИТУТА  
ЭСТОСЛОВЕДИИ  
Академии Наук  
СССР

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ  
ԴՊՐՈՑՆԵՐԻ  
ԾՐԱԳՐԵՐ

- ա) Հայոց լեզու
- բ) Մաթեմատիկա

ՊԵՏԶՐԱՏ—ՈՒՍՄԱՆԿԷՐԱՏՐԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ ★ 1 9 3 3

491.99(07)  
9-87

համառոտ նախադասութիւններ, ուսուցչի կողմից գրատախտակին դրած բառեր ու կրճատ գրութիւններ, դասագրքի մատչելի հոդվածներ և վտանավորներ:

Խմբակային ընթերցանութիւն:

Հետևել, վոր իր կարողացածն ու արտաստնածը լինեն կանոնավոր, կետադրութեան և առողանութեան նըշանների համաձայն:

Աստիճանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և բարձրաձայն կարգալուծ, իսկ ընթերցարանի բաժնում սխել նաև ինքնուցուծ կերպով յուս գիտակցական կարգալուծ փորձեր:

Սովորեցնել հոդվածը մասերի բաժանել և վերնագրել:

Կարողանալ անհասկանալի բառերը կամ նախադասութիւնները առանձնացնել:

Իր և ընկերների ձեռագրերը կարգալուծ վարժութիւն:

2. ՁԵՌԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Գրաձանաչութիւնն անցնելուց առաջ 2-3 ժամ հատկացնել տառերի ելեմենտների վարժութիւններին և ընտելացնել գրելու տեխնիկային (գրելիս կանոնավոր նստել, կանոնավոր մատիտ բռնել և այլն):

Ուսուցչի անմիջական հսկողութեամբ սովորել կանոնավոր, մարտը, պարզ և վոչ շատ խոշոր տառերով գրել:

Կարողանալ գրատախտակից գիտակցորեն ու ճիշտ արտագրել առանց տառ բաց թողնելու բառ-բառ, իսկ յերկար բառերը՝ վանկ-վանկ, բայց վոչ տառ-տառ: (Սկզբնական շրջանում տալ այնպիսի նախադասութիւններ, վորոնք նախապես կազմվում են հասկող ալբուրենի տառերով):

Աստիճանաբար անցնել այլբենարանի ձեռագիր տեքստից արտագրելուն:

Նախապես վարժ կարգալ սովորելուց հետո կարողանալ այլբենարանի տպագրից արտագրել:

Սովորել հիշողութեամբ բառեր և պարզ նախադասութիւններ:



60072-66

ութիւններ գրել ինչպես և գրել ուսուցչի արտաստնած՝ ուղղագրական տեսակետից հեշտ բառեր, խոնարհութիւնով այնպիսիներից, վորոնց գրութիւնը չի համապատասխանում արտասանութեանը:

3. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՒԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Պարզել սովորողների ունեցած բառապաշարը և ըստուգել նրանց ըմբռնումը: Հարստացնել սովորողների բառապաշարը շատ գործածական հասարակական-պարզաբան միջազգային և տեխնիկական բառերով: Պայքարել դասակարգայնորեն խորթ բառերի գործածութեան դեմ:

Հետևել գրական լեզվի մաքրութեանը՝ ապահովել աստիճանաբար վերացնել բարբառային բառերը՝ զգալի

Սովորեցնել կանոնավոր և ազատ բառապաշարից դիտողութիւնների, ապրումների, կատարած աշխատանքների և արտագրական աշխատանքների վաւասին, ժողովում կամ ռադիոյով լսածի, կիրոյում, գործարարնում և այլուր տեսածի մասին:

Կարողանալ հոդվածին վերաբերող կարգալուծ պատասխաններ տալ:

Վարժեցնել ինքնուրույն կերպով նկարագրելով յարգ հոդվածների բանաձևը՝ անկողնային լեզուի հարցերի միջոցով, ապա՝ առանց հարցերի՝ լսածը, լիցք կարողացածի հիմնական միջոցով՝ անմիջական զգալի կարողանալ լողունը կազմել:

Կարողանալ պատմել կարգալուծ գրքերի մասին՝ մտնոտ բովանդակութիւնը և իր տպավորութիւնները:

Կարողացածի շնորհիւ աշխարհագրորդներից արտատախտակներն ինքնուրույն կերպով գրել՝ ստեղծել վաւասինախաղասութիւններով:

Նախապես պլան մշակել հարցերի՝ ձեռագրեցածաձայն այդ պլանի, կազմել յարցերն և կարգալուծութիւնը՝ անաւարաց ցմացմ մալ Յուդեարս «ձ» թմն

Գրատախտակի վրա կանոնապես նկարահանելով վերլուծութիւնը բառերի ուղղագրութիւնը՝ սովորեցնել կիրառելու ին կերպով կազմել՝ անվանացեցանի, (խոնարհութիւն) 6

հարցից բաղկացած անկետա, գրել կարճ նամակ, պարզ հասցե, հեռագիր, ստացական, լրագրագիր:

Ուսուցչի անմիջապես հսկողութեամբ դասարանում մշակել պատի լրագրի համար կոլեկտիվ և անհատական թղթակցություններ:

#### 4. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՅԵՎ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ծանոթացնել, վոր մեր խոսքը կազմված է նախադասություններից:

Սովորեցնել պարզ նախադասություն կառուցել:

Կարողանալ նախադասությունը բառերի բաժանել, բառերը՝ վանկերի և վանկերը՝ հնչյունների:

Կարողանալ նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կապ ունեցող բառեր:

Հարցերի ոգնութեամբ (առանց տերմինների) վորոշել նախադասության գլխավոր անդամները:

Գիտենալ վերջակետի գործածությունը: Կարողանալ ուսուցչի ասած պարզ նախադասությունները գրել սկսելով մեծատառով և նախադասության վերջում դնելով վերջակետ:

Սովորել մեծատառի գործածության պարզագույն դեպքերը. գիտենալ, վոր վերնագիրը, գրության սկիզբը, մարդկանց անունը և ազգանունը, քաղաքների գյուղերի, գետերի, լեռների, փողոցների, գրքերի անունները գրվում են մեծատառով:

Գիտենալ շեշտի, հարցականի և բացականչական նշանների գործածությունը և դրա հետ կապված կանոնները:

Բառերը լողութեամբ տողադարձ անել: Գիտենալ տողադարձի պարզագույն դեպքերը՝ տողադարձի ժամանակ տողադարձի նշան է դրվում, միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել և այլն:

Գրության և արտասանության անհամապատասխանությունը. հնչյուն և տառ. գիտենալ, վոր բառի մեջ «և» սղագրության նշանը բաղաձայնից հետո յերկահնչյուն (եվ) (տե—ր+եվ) ձայնավորից հետո կամ առանձին գործածվելիս յեռահնչյուն (յեվ) (ն—ա+յեվ) վանկի նշան է. «և» սղագրության նշանը

մեծատառ ձև չունի, գրվում է լրիվ (Յեվ) (Յեվ—բուպա) տառերով:

Գիտենալ յերկձայնները և «յ» ձայնակապի ուղղագրությունը բառասկզբում և բառավերջում:

Գիտենալ «ը» ձայնավորի ուղղագրությունը բառասկզբում և բառավերջում:

Գիտենալ, վոր ստանդակ բայը գրվում է առանձին:

Յեզակի և հոգնակի. գիտենալ, վոր ն—ով վերջացող բաղմավանկ բառերը հոգնակիում գրվում են յերկու «ն»—ով (սեղա—ն+ներ):

Գիտենալ շատ գործածական միջադգային և տեխնիկական բառերի ուղղագրությունը:

Ուղղագրական վարժություններ շատ գործածական վերջածանցներով:

#### 5. ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԳՈՎ ՅԵՎ ԼՐԱԳՐՈՎ.

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին, հրատարակության, տիրաժին, մի խոսքով՝ գրքի արտաքինին: Ցանկի ոգնութեամբ գտնել հարկավոր հոդվածը:

Ծանոթանալ շրջանային թերթերին.—անուն, թիվ, №, որդան, խմբագրություն, թղթակցություն, առաջնորդող, թերթի գլխավոր բաժինները:

#### ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Գրագիտության դպրոցում գրաճանաչությունը պետք է անցկացնել համակցման մեթոդով, վորով և կազմված է մեծահասակների նոր այբբենարանը («Հարվածային գրագետ»— կազմեց Մ. Գասպարյան, Պետհրատ, 1933 թ. գինը 75 կոպ. ):

Համակցման մեթոդը կարդալ—գրելու մեթոդ է, վորովհետև հենց առաջին դասից կարդալու և գրելու աշխատանքները տարվում են զուգընթաց (վոր ամբողջական բառը կարդում են, նույնն էլ արտագրում են և վոչ թե արտագծում):

Համակցման մեթոդը վերլուծական—համադրական մեթոդ է, վորովհետև հենց առաջին դասից ամբողջական բառը վանկային և հնչյունային վերլուծման է յեմթարկվում և նույն ժամանակ այդ հնչյուններից և վանկերից նույն բառը համադրվում:

Մեր հանձնարարած մեթոդը ինչո՞վ է նման մյուս մեթոդներին և ինչո՞վ է տարբերվում նրանցից:

Մեր մեթոդը ամբողջական բառերի մեթոդին նման է նրանով, վոր նա աշխատանքը միշտ սկսում և վերջացնում է ամբողջական բառերով, իսկ տարբերվում է նրանով, վոր ամբողջական բառերը մեքենայորեն անդիր անել չի տալիս:

Վանկային մեթոդներին նման է նրանով, վոր պահպանում է հեշտ վանկերիցն ազելի դժվար վանկերին անցնելու հաջորդականությունը. բայց այստեղ ել մեր մեթոդը տարբերվում է վանկայինից. հաշվի առնելով առանձին վանկերի նշանակությունը՝ մեր մեթոդով պարտելու ժամանակ յերբեք չենք դիմում առանձին վանկերն անդիր անելուն:

Անյուհետև հնչյունային մեթոդի նման մեր մեթոդը ձգտում է կարգալու ընթացքը հասկանալի դարձնել անդրադեռին և մեծ ուշադրություն է դարձնում խոսքի հնչյունային կազմի վրա:

Սակայն հնչյունային մեթոդից այս մեթոդը տարբերվում է նրանով, վոր ա) չի ընդունում մաքուր հընչյուններ և նրանց ձուլումը, բ) բացատում է կարգալուց և գրելուց կարված հնչյունների վարժություններ և դ) աշխատանքը կատարում է միայն իմաստալի նյութի վրա:

Գրաձանաչություն սովորեցնելիս այբբենարանի չափ մեծ նշանակություն ունի կարգալ և գրել կարողանալու համար անհրաժեշտ և անփոխարինելի պիտույք՝ հատվող այբուբենը:

Հատվող այբուբենի տառերով բառերը նախապես վերլուծելը և նրանց կազմելը մեծահասակ աշակերտներին սովորեցնում է տարբերել առանձին հնչյունները բառի մեջ և արտահայտել յուրաքանչյուր հնչյունը նրան համապատասխան տառով: Բացի այդ «Թարմ հետքերով» կարգալով ինքնուրույն կազմած բառերը, աշակերտները ամրացնում են բառերը կապակցված կարգալու իրենց ունակությունը: Հատվող այբուբենի միջոցով շատ հարմար է աշակերտներին ցույց տալ, թե ինչպես է կազմվում բառը, ինչպես է բաժանվում վանկերի և ինչ տառերից է կազմված նա:

Հատվող այբուբենը լինում է 2 տեսակ. մեկը մեծադեր՝ դասարանական, վորի հատած տառերից բառեր և նախադասություններ են կազմում գրատախտակի վրա և ցույց է տրվում աշակերտներին, իսկ մյուսը փոքրադեր՝ աշակերտական, վոր առանձին թերթի վրա տպած կա այբբենարանում. այդ այբուբենը յուրաքանչյուր աշակերտ կտրտում է և պահում լուցկու կամ մի այլ տուփի մեջ:

Վոչ մի դեպքում կարգալու համար չի կարելի տալ այնպիսի բառ, վորի հնչյունային կազմը սովորողին անծանոթ է կամ անհասկանալի, վորովհետև այդ դեպքում նա այդ բառն անդիր կանի: Դրա համար կարգալու ուսուցումը պետք է սկսել այսպես. —

Մանթացնել, վոր մեր խոսքը կազմված է նախադասություններից,

նախադասությունները կազմված են բառերից, բառերը կարելի չէ բաժանել վանկերի, վանկերում կարելի տարբերել առանձին հընչյուններ:

Այս բացատրել աշակերտներին, թե ի՞նչ ձևով պետք է կարգալ սովորեն:

Հնչյուններն առանձնացնելը կատարվում է վանկը յերկարացնելու միջոցով:

Յուրաքանչյուր հնչյուն առանձնացնելիս պետք է ցույց տալ այն տառը, վորով այդ հնչյունն արտահայտվում է:

Այդպիսով կատարվում է վոչ միայն հնչյունային, այլ և նրան համապատասխանող տեսողական վերլուծություն:

Մշտապես պետք է բացատրել աշակերտներին, վոր կարգալիս չի կարելի արտասանել առանձին հնչյուններ և վանկեր:

Սկզբնական շրջանում (10-15 ժամ) սովորողները կարդում են այնպիսի տեքստ, վոր նրանք նախապես կազմում են հատվող այբուբենի տառերով: Այս շրջանում կարգալու ուսուցման գլխավոր նպատակն է սովորեցնել բառերը վանկերի բաժանել և վանկերում

տարբերել հնչյուններ. հատվող այբուբենի տառերով կազմել վոչ բարդ բառեր և նախադասութիւններ և կարողանալ կարգալ կազմած տեքստը: Այդ տեքստը պետք է համապատասխանի այբբենարանի առաջին եջերին: Նրանից հետո միայն դասատուն կարդում է այբբենարանի համապատասխան տեքստը: Կարդալուց հետո բառերն արտասանել ամբողջական վանկերով, բայց յերկարացնելով. վորպէսզի աշակերտները կարողանան լսել հնչյունները բառերի մեջ և կապել նրանց համապատասխան տառերի հետ: Դրանից հետո աշակերտները խմբովին կարդում են մշակված ամբողջական տեքստը: Կարդալու հիմնական ձևը անաստական ընթերցումն է, բայց շատ ոգտավետ է հաճախ խմբովին կարդալու մեթոդը դարձածելը:

Կարդալու ուսուցման յերկրորդ շրջանում (33-40 ժամ) խնդիր է դրվում սովորեցնել կարդալ վոչ բարդ տեքստ՝ կազմված ծոնոթ տառերից, առանց նախապես հատվող այբուբենի տառերից այդ տեքստը կազմելու: Այս շրջանում վերջացնում են գրաճանաչութիւնը, ավարտում են այբբենարանի մասը և այսպիսով հիմնականում տիրապետում կանոնավոր ընթերցանության տեխնիկային: Յերկրորդ շրջանում կարդալու հիմնական ձևը դասարանական բարձրաձայն ընթերցանութիւնն է, այսինքն, յերբ աշակերտները հերթով կարդում են հոգվածի առանձին հատվածները. նախ կարդում են ավելի ուժեղները, ապա թուլերը, մյուսները հետևում են իրենց այբբենարաններով: Անպայման պետք է ապահովել բոլորի կարդալը, յեթե վոչ միևնույն դասին, գոնե հաջորդ դասերին: Այս շրջանում հատվող այբուբենից կազմում են միայն կարդալու համար տրված նյութի համեմատաբար դժվար նախադասութիւններ: Այս աշխատանքի նպատակն է օրդորողներին համար հեշտացնել կարդալը: Ընթերցարանի շրջանում ամբողջ ժամանակը պետք է հատկացնել մի կողմից կանոնավոր և արտահայտիչ, ամբողջական բառերով բարձրաձայն կարդալու ունակութիւնների զարգացմանը և մյուս կողմից վարժեցնել ինքնուրույն կերպով լուռ դիտակցորեն կարդալուն:

Այն բառերը, վորոնց մեջ կան դժվար վանկեր, վորոնք կազմված են շատ տառերից, մշակվում են հատվող այբուբենով:

Ձրույցից, ընթերցանութիւնից և դժվար բառերի մշակումից հետո աշակերտները լուռ կարդում են և սլատրաստվում պատասխանելու այն հարցերին, վոր նախապես մշակել է ուսուցիչը սվյալ հոգվածի համար: Լուռ կարդալուց հետո կարելի յե մեկ-յերկու անգամ բարձրաձայն խմբովին կարդալ տալ:

Ձեռագրի ուսուցման առաջին շրջանում (մոտ 30 ժամ) սովորողներին պետք է ընտելացնել գրելու տեխնիկային՝ գրելիս կանոնավոր նստել, կանոնավոր գրիչ և մատիտ բռնել և այլն:

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել դիտակցորեն արտագրել կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ շատ խոշոր տառերով՝ սկզբում ձեռագրերը, իսկ վերջում յերբեմն նաև տպագիր տեքստից: Պետք է հետևել, վոր սովորողներն արտագրեն առանց տառ բաց թողնելու, կարողանան գրել բառ-բառ, իսկ յերկար բառերը՝ վանկ-վանկ, բայց վոչ տառ-տառ:

Պետք է արտագրել միայն այնպիսի նախադասութիւններ, վորոնք նախապես կազմված են հատվող այբուբենի տառերով:

Սկզբում ձեռագիր տեսքը արտագրում են գրատախտակից, ապա աստիճանաբար անցնում են այբբենարանի ձեռագիրը տեքստից արտագրելուն:

Առանձին տառեր գրելու վարժութիւն կարելի յե կատարել միայն բացառիկ դեպքերում, յերբ այս կամ այն տառի գրելու մեջ դժվարանում է սովորողը:

Պետք է սուսանձնապես հետևել գեղագրության. միանգամայն բավարար կլինի, յեթե սովորողները գրեն կանոնավոր և դյուրընթեռնելի:

Ձեռագիր տեքստից արտագրութիւն կատարելուց չպետք է անմիջապես անցնել տպագրից արտագրելուն: Նախ պետք է նույնը գրել գրատախտակին, վարժեցնել սահուն կարդալուն և ապա առաջարկել արտագրել տպագրից՝ առանց ջնջելու գրատախտակին գրածը, վորպէսզի դժվարանալու դեպքում սովորողը կարողա-

նա համեմատել տպագիրը ձեռագրի հետ: Դրանից հետո պետք է արտագրել տալ նախապես գրատախտակին գրածը՝ ջնջելով կամ ծածկելով: Միայն այս յերկու աստիճաններից հետո կարելի յե անցնել միանգամից տպագրից արտագրելուն:

Ձեռագրի ուսուցման յերկրորդ շրջանում (մոտ 30 ժամ) պետք է աշակերտներին նախապատրաստել, վոր նրանք կարողանան ինքնուրույն գրել:

Իրա համար տվյալ շրջանում հիմնականում պետք է սովորեցնել հիշողությամբ գրել, ինչպես և գրել ուսուցչի արտասանած ուղղագրական տեսակետից հեշտ բառերը և համառոտ նախադասությունները՝ խուսափելով այնպիսի բառերից, վորոնց գրությունը չի համապատասխանում արտասանության:

Հիշողությամբ գրելը կատարվում է այսպես. գրատախտակին գրված կարճ նախադասությունն արտագրել են տալիս նախ ջնջելով մեկ, ապա յերկու և յերեք բառեր: Յերբ սովորողները ազատ կերպով կարողանան հիշողությամբ գրել 2-3 բառ, կարելի կլինի ջնջել ամբողջ նախադասությունը:

Այս յերկրորդ շրջանում սովորողներին մեջ պիտի դարձնեն ուղղագրական ունակությունները. մեծատառի գործածության պարզագույն դեպքեր (վերնագրերը, նախադասությունը, հատուկ անուններն ըսկսվում են մեծատառով և այլն). վերջակետի գործածությունը վորպես նախադասության վերջի նշանի. յերկնաչափների գրություն. հոգնակի վերջավորությունների ուղղագրություն:

Ուղղագրության յուրաքանչյուր առանձին ունակության ամրացման համար պետք է առնվազն 3-4 որ իրար յետևից միևնույն ունակության վերաբերյալ վարժություն կատարել:

Ձեռագրի ուսուցման յերկրորդ շրջանում ամրացվում են արդեն ձեռք բերված ունակությունները և տրբվում են ինքնուրույն գրավոր աշխատանքի ունակությունները:

Մտադրել կազմել և լժկ-ի ծրագրամեթոդական կայանի լեզվի և գրականության սեկցիան:

## ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾՐԱԳԻՐ

### 1. ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Մեծահասակներին վարժեցնել պատմել իրենց տպավորություններին և կատարած աշխատանքներին մասին: Ուղղել նրանց խոսքի պակասավոր կողմերը, վերջավորությունները վոչ լրիվ և անկանոն արտասանելը, սովորեցնել կանոնավոր գրական հայերենով մտքերը բանավոր ամփոփի հաղորդել: Աշխատանքների ընթացքում հարստացնել և ճշգրտել նրանց բառարանը գիտելիքներից ստացած նոր բառերով: Բարբառից աստիճանաբար անցնել գրական մաքուր լեզվի: Տված հարցերին կարողանալ լրիվ և ամբողջական պատասխաններ տալ: Ուղղել վոճի պակասավոր կողմերը: Կարողանալ հողվածների բովանդակությունը պատմել:

Կարողանալ ազատ պատմել իր արտադրական կյանքում աեսածի և լսածի մասին: Կարողալ փոքրիկ գրքույկներ և պատմել կարգացածի մասին: Պլանով բանավոր զեկուցելու և մտքերը կանոնավոր արտահայտելու ունակությունների զարգացում: Կարողացած դասի բովանդակության բանավոր շարադրություն: Թերթերի ամեն տեսակ հողվածների բովանդակության հաղորդում: Անհատականալի բառերի իմաստի ճշտում: Ժողովներում համառոտ զեկուցումներ տալու ունակություն: Վոտանավորների և զեղարվեստական հատվածների արտասանության վարժություն:

### 2. ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել մաքուր և պարզ գրել գրատախտակից՝ գիտակցորեն արտագրել առանց տառեր և բառեր բաց թողնելու: Կարողա-

նալ ուսուցչի արտասանած համառոտ և ընդարձակ նախադասութիւնները գրել և դասադրքից արտագրութիւններ կատարել: Սովորողների կյանքից վերջրած նյութը համառոտ կերպով լեզվական մշակման յեթարկել և դարձնել շաքարութիւն նյութ: Տալ դիտողական թելադրութիւններ և ուղղագրական շարադրութիւններ: Սովորեցնել որագիր և գործնական փոքրիկ գրութիւններ կազմելու ձևերը: Գրել դիմում, անկետա, նամակ, հասցե, հայտարարութիւն և փոքրիկ թղթակցութիւններ: Կարդացած հոդվածների շուրջը գրել կարճ շարադրութիւններ՝ նախորոք մշակելով հարցերը:

Ազատ, մաքուր և պարզ գրելու վարժութիւն, տողած և անտող թղթի վրա նախորոք մշակված հոդվածների բովանդակութեան շուրջը գրել պարզ ինքնուրույն շարադրութիւն: Իսասարանում մշակված հոդվածների ծրագիր կազմելու ունակութիւն: Կարողանալ ուսուցչի առաջադրած գրավոր հարցերին գրավոր պարզ պատասխաններ տալ: Գատի լրագրին պարզ թղթակցութիւններ գրել՝ համառոտ և կապակցված կերպով: Գրել իր կենսագրութիւնը: Գրավոր աշխատանքի ժամանակ բառադրույկից ոգտվելու վարժութիւն:

### 3. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածների կանոնավոր արտահայտիչ ընթերցանութիւն՝ հետեւելով առողանութեան և կետադրութեան կանոններին: Ինտոնացիայի միջոցով հասկացնել նախ վերջակետի, ապա ստորակետի և առողանութեան նշանների նշանակութիւնը: Կարողանալ գրատախտակի վրա ուսուցչի գրած ընդարձակ նախադասութիւնները կարդալ: Ձարգացնել սովորողների բարձրաձայն և լուռ ընթերցանութեան ունակութիւնները: Նախորոք ապահովել տան համար տված ընթերցանութեան նյութի յուրացումը և ստուգել արդյունքները: Գիտենալ, թե ով է գրքի հեղինակը, ցանկի ոգնութեամբ գտնել պահանջված հոդվածը:

Կարդացած հոդվածները մասերի բաժանել: Փոքրիկ գեղարվեստական հոդվածների ինքնուրույն ընթերցանութիւն: Հասկանալ անձանոթ բառերի իմաստը: Ուսուց

չի ոգնութեամբ դասադրքերից, բրոշյուրներից, թերթերից գտնել ու դուրս հանել հետաքրքրող հարցերի պատասխանները: Գրադարաններից ոգտվելու ունակութիւն: Ծանոթանալ պարբերականների տեսակներին և անուններին:

### 4. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Խոսք. նախադասութիւն. նախադասութեան գլխավոր անդամներ՝ յենթակա և ստորոգյալ. լրացումներ. խոսքի մասեր. գաղափար գոյական անունների մասին. դերանուններ. բայեր. շաղկապ. հոլովում (ի). խոնարհում (ներկա, անցյալ և ապառնի ժամանակների մասին գաղափար): Դեմք, թիվ:

Գրութեամբ և արտասանութեամբ անհամապատասխան բառերի ուղղագրութիւնը. յերկձայներ (ալ, ուլ, յա, յե, յու). յ ձայնակապը. ը-ի ուղղագրութիւնը (սկ, ստ, շտ և ալլն): Մեծատառի գործածութեան բոլոր դեպքերը:

Վերջակետի, ստորակետի, բազմակետի, չակերտի և բութի գործածութիւնը: Հարցական և բազականչական նշանների գործածութիւն:

Հնչյունափոխութիւն ու-ը (տուն-տնակ), ի-ը (կիր-կրաքար), ե-ի (պարտեզ-պարտիզի):

Պարզ, անանցավոր և բարդ բառեր: Տողադարձ:

Ծրագիրը կազմել է ԼԺԿ-ի Ծրագրա-Մեթոդական կայանի Լեզվի և Գրականութեան սեկցիան:

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Գրագիտության և կրթագրագետների զարդաների մաթեմատիկայի ծրագրի նպատակն է մեծահասակ սովորողներին տալ մաթեմատիկայից սխտեմատիկ գիտելիքների վորոչ պաշար և հմտություն, այդ գիտելիքները արտադրության և քաղաքական-հասարակական կյանքում կիրառելու համար:

Ծրագրում նախատեսված յերկու տարվա տևողությամբ դասընթացը պիտի ապահովի սովորողներին ձեռք բերելու գիտելիքներ թվաբանությունից և զննական յերկրաչափության տարրերից:

Ծրագրով սահմանված նյութը նախատեսվում է անցնել 300 ժամում: Դա միանգամայն հնարմվոր է, քանի վոր մեծահասակ անդրագետը դալիս է սովորելու կյանքում արդեն ձեռք բերած վորոչ գիտելիքներով: Յուրաքանչյուր մեծահասակ անդրագետ պիտե հաշվել առնվազն հարյուրի սահմանում: Պարզ է նաև այն, վոր մեծահասակն ավելի լավ է տիրապետում քանակի դադափարին, նրա համար միանգամայն հասկանալի յեն քանակական հակադրություններ՝ քիչ-չատ, մեծ-փոքր, մեծացնել-փոքրացնել, ծանր-թեթև և այլն:

Անկասկած մեծահասակ անդրագետի ունեցած այս մաթեմատիկական նախնական պատրաստականությունը ոժանդակում է ծրագրի առաջ դրված նպատակների իրագործմանը—այն է, յերկու տարվա ընթացքում մեծահասակ սովորողներին տալ մաթեմատիկական գիտելիքներ և հմտություն՝ այդ գիտելիքները կյանքում կիրառելու:

Ծրագրին անցնելիս նյութի հաջորդականությունը վորչ մի դեպքում չպետք է խախտել: Յուրացումն ապահովելու համար անհրաժեշտ է գիտելիքները տալ վորոչ հաջորդականությամբ միաժամանակ կատարելով շատ վարժություններ: Ծրագրում ամեն անգամ չի շեշտ վում վարժություններ կատարելը, բայց միանգամայն հասկանալի յե, վոր ամեն մի նոր նյութ կարելի յե անցնել միայն և միմիայն այն ժամանակ, յերբ նախորդի նկատմամբ սովորողները վարժությունների միջոցով ձեռք են բերել կայուն ունակություններ: Սկզբունք պիտի ընդունել—վորչ մի քայլ առաջ, մինչև սովորողները անցած նյութը լավ չյուրացնեն: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել այն ունակություններին, վորոնք հիմք են ծառայում հաջորդ նյութը յուրացնելու համար:

Մաթեմատիկայի դասընթացը մեծահասակ անդրագետների զարդաներում պիտի դրվի այնպես, վոր սովորողի ձեռք բերած գիտելիքները ծառայեն վորպես գենք ակտիվ կերպով մասնակցելու յերկրի սոցիալիզմի կառուցմանը և շրջապատող յերևույթների ճանաչմանը:

Սոցիալիստական շինարարության գործում հաշվառումը կարևոր գործոն է հանդիսանում. արդժիխալանների կատարումն ու գերակատարումը, աշխատանքի բաշխումն ըստ քանակի, աշխատանքի վորակի հաշվառումը քանակական ցուցանիշների միջոցով և այլն—այս բոլորը պահանջում են բանվորից ու կոլտնտեսականից, թեպետ և տարրական, բայց և այնպես հաշիվ կատարելու վորոչ հմտություն:

Ուրեմն պարզ է, վոր մեծահասակների մոտ մաթեմատիկայի սխտեմատիկ դասընթացի մեջ մեծ տեղ պիտի հատկացնել վարժություններին և գործնական խընդիրների լուծմանը:

Խնդիրների բովանդակությունը պիտի վերցնել գործարանի, կոլտնտեսության, խորհանտության առաջին և յերկրորդ հնգամյակի տվյալներից:



ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՊՐՈՑ

Ա ԽՈՒՄԲ

1. ԹՎԱՆՇԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ուղիղ և հակադարձ համրանք մինչև տաս: Պարզ և համառոտ խնդիրների բանավոր լուծում: Մեկից մինչև տաս թվանշանների գրելն ու կարդալը: Գումարման և և հանման գրավոր վարժություններ տասի սահմանում: Մեկ յերկու հարցանի պարզ խնդիրների լուծում:

2. ԱՄԲՈՂՁ ԹՎԵՐՈՎ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՉՈՐՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Մինչև հարյուր կլոր տասնյակներով թվեր գրել ու կարդալ: Գումարում և հանում կլոր տասնյակներով մինչև հարյուր: Գաղափար բազմապատկման և բաժանման գործողությունների մասին: Բանավոր և գրավոր թվարկություն մինչև հարյուր: Յերկանիչ թվերի գումարում, հանում, բազմապատկում և բաժանում:

Յերկու թվերի համեմատությունը— «այսքանով մեծ», «այսքանով պակաս», «այսքան անգամ մեծ», «այսքան անգամ փոքր»:

Ծանոթացնել հոմեյակյան թվանշաններին (I-XX):

Հարյուրակներով բանավոր և գրավոր թվարկություն մինչև հազար: Գումարում և հանում հարյուրակներով մինչև հազար: Հարմարանք տասնյակներով հարյուրից բարձր: Գումարում և հանում տասնյակներով հազարի սահմանում: Թվեր գրել ու կարդալ մինչև հազար: Չորս գործողություն հազարի սահմանում: Հանման և բաժանման գործողությունների ստուգումը գումարման և բազմապատկման միջոցով:

Մետրական չափեր— յերկարության և կշռի:

Գործարանի, կոլտնտ, խորհանտեսության և արտա

գրական ալ նյութերի հիման վրա կազմել գիագրամներ:

Բազմանիչ թվեր գրել ու կարդալը: Գումարում, հանում, բազմապատկում և բաժանում բազմանիչ թվերով:

Անվանական թվերով չորս գործողություններ կատարելը: Վերածում և անդրադարձում:


Գաղափար ամբողջ մասերի մասին:

3. ԶՆՆԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

Յերկրաչափական մարմիններ: Խորանարդ, ուղղանկյուն, զուգահեռանիստ, ուղիղ պրիզմա: Նրանց տարրերը. նիստ, կող, գագաթ:

Ուղիղ և բեկյալ գծեր: Հատված և նրա չափումը: Գաղափար մասշտաբի մասին:

Մակերեսների չափումը քառակուսի միավորներով: Ուղղանկյան մակերեսի հաշվումը: Խորանարդի և ուղղանկյան զուգահեռանիստի ծավալի հաշվումը:



ԿԻՍԱԿՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ

Բ. ԽՈՒՄԲ (15 ժամ)

1. ԹՎԵՐԻ ԲԱԺԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թվաբանական չորս գործողություններ բազմանիշ թվերով (կրկնություն):

Թվերի բաժանականությունը. բաժանականության հատկանիշները 2-ի, 5-ի, 4-ի, 8-ի, 3-ի, և 6-ի: Պարզ և բարդ թվեր: Թվերի վերածումը պարզ բազմապատկիչների: Ընդհանուր ամենամեծ բաժանարար: Թվերի ամենափոքր բազմապատիկը գտնելը:

2. ՀԱՍԱՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Գաղափար հասարակ կոտորակների մասին: Հասարակ կոտորակներ գրել ու կարդալը: Կանոնավոր և անկանոն կոտորակ: Ցանկացած հայտարարով ամբողջ կոտորակ դարձնելը: Սառը թիվ: Անկանոն թիվը խառը կոտորակ դարձնելը և հակառակը: Հասարակ կոտորակները մեծացնել և փոքրացնել մի քանի անգամ: Կոտորակների կրճատումը: Կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը:

Կոտորակների գումարումը և հանումը: Տված թվի մասը գտնելը: Բազմապատկում: Տված մասով թիվը գտնելը: Բաժանում:

3. ՏԱՄՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Գաղափար տասնորդական կոտորակների մասին: Գրել ու կարդալը: Տասնորդական կոտորակի հայտարարը: Տասնորդական կոտորակները մեծացնել ու փոքրացնելը 10, 100 1000 և ավելի անգամ:

Չորս գործողություններ տասնորդական կոտորակներով:

Տասնորդական կոտորակը հասարակ դարձնելը: Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը: Հասարակ կոտորակի մոտավոր արտահայտությունը տասնորդական կոտորակով: Սառը գործողություններ հասարակ և տասնորդական կոտորակներով: Տոկոսներ:

4. ԶՆՆԱԿԱՆ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

Յերկրաչափական պատկերներ. քառակուսի, ուղղանկյուն, զուգահեռագիծ, շեղանկյուն, յեռանկյուն: Հիմք և բարձրություն: Նշած պատկերների մակերեսները վորոշելը:

Շենքի, հողամասի, դործարանի և այլ մակերեսների չափումը: Հատակագիծ կազմելը:

Չլան: Հարթ և կոր մակերևույթներ: Կոր գիծ: Շրջագիծ: Շրջագծի կենտրոնը, շառավիղը, տրամագիծը. լար և աղեղ:

Շրջան: Սեկտոր և սեգմենտ:

Ուղղահայաց: Սուր և բութ անկյուններ: Աստիճաններ: Անկյան չափումը փոխադրելով:

Շրջանագծի յերկարությունը վորպես 3, 14-ի և տրամագծի արտադրյալը: Շրջանի մակերեսը, վորպես շրջանագծի յերկարության և շառավղի արտադրյալի կեսը:

Գլանի ծավալի հաշվումը:

Գունդ: Գնդի շառավղի տրամագիծը: Մեծ շրջան: Կիսագունդ:

60072.66



Ծրագիրը կազմել և Լուսժողովմասի Ծրագրա-Մեթոդական կայանի Ֆիզիկո-Մաթեմ. սեկցիան:

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

ՀԱՅԿԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
1933

00048-00

Программы  
Для школ грамотности и неграмотности  
а) Армянский язык  
б) Математика

Госиздат ССР Армении Эривань 1933

ՀՀ Ազգային գրադարան



NL0248585

70.095

004  
34-1  
Ca 784

ру

1

1

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВСТОЧНОЗВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР